

կանայք և հարսները մատներին գնում են ոսկէ կամ արծաթէ մատանիները. աղջիկները դաստակներին անցկացնում են «ապրջան» կամ բրդից գործւած թէլի վրայ երկու շարք շարած գոյնգոյն ուլունքներ:

Վիճեննա
(Եարութակել)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՆԻ

Ժ.

ԲԱՐԴԻՐԻՔ ԱՄԵՐՏՈԼՎԱԹԱՅ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՐԻ Ս. ԴԱԶԱՐՈՒ ՎԱՆԵՒ

(Եար. տես բազմ. 1923 էջ 328)

Թ.

ԲԱՐԱԿԱՐԴ ԱՄԵՐՏՈԼՎԱԹԻ

ՑՅԾՐԸ թուահամարը կրող ձեռագիրն է սա. ունի բասակարգ Ամիրտոլվարի վերնագիրը, բայց է այս՝ բժիշկն Անգիտաց Անկարին մէկ ուրիշ օրինակը:

Ցիշատակութեան արժանի ոչ մէկ բան չի ներկայացներ. պակասաւոր և անթուական ընդորինակութիւն մ'է, առանց որ և է Ցիշատակարանի. զիւր նոտր է, ոչ այնչափ գեղեցիկ՝ բայց ընթեռնի. զրութիւնը ընդհանրապէս միասիւն է, և տեղ տեղ ալ երկսիւն. թուզթը բամբակեայ է. ամբողջը 127 թերթ է 254 էջ զրութեամբ. կազմը լաւ է և կաշի. մեծութիւնն է 21 հր.մեղք, լայնութիւնը 15 հր.մեղք, ունի 760 էջ զրութիւն և 387 թերթ, որոնց գերջի եօթից՝ բոլորովին պարապ են:

Կը սկսի Ասալուսն վախտով բառով, և կը վերջացնէ ֆուֆայով, և ապա դարձեալ կը շարունակէ նոր բառակարգ մը, որուն պարունակութիւնն ալ նոյնն է, կրնանք ըսել թէ առաջինին կրկնութիւնն է:

Եւ ցաւալի է յոյժ, որ այսպիսի ընդօրինակութիւններ՝ որոնց կրնային ուրիշ օրինակներու բաղդատութեան օգտակար հանգիսանալ՝ զուրկ են յիշատակութիւններէ. ընդորինակութեան մը տեղը, թուա-

կանը, զրիչին անունը մեծապէս կ'աղջին օրինակին արժէրին վրայ և զայն այլապէս յարգի կ'ընծայէն:

Ա.

ԲԱՐԴԻՐԻՔ ԱՄԵՐՏՈԼՎԱԹԱՅ

Սա ևս Ամիրտոլվաթայ Անգիտաց Անպատին մէկ ուրիշ օրինակն է, իր հնութեամբը Վարդ Մըրտիցիի բժշկաբանէն յետոյ դասելի, որովհետեւ 1662 թուականին է գրուած:

Անվականութիւնն եղած է զրասէր և զրավաստակ Տիրզեան թակոր Զէլէպիին, որ Ս. Ղազարու զրատունին նուրիած է զայն 1826 Դեկտեմբերի 26ին, ինչպէս կը կարգանք հասորին վախճանը:

Մեծէկակ հատոր մ'է, թէկ լի տառասը-խալներով և խեղաթիւրուած տողերով ու պարբերութիւններով։

Կաշէկազմ է լաւ հանգամանքներու մէջ պահուած. թուզթն է ընտիր բամբակեայ, զիւր նոտր, ընթեռնլի և երկսիւն. Մեծութիւնն է՝ 21 հր. մեղք, լայնը 15 հր. մեղք, իսկ թանձրութիւնը 6,5 հր. մեղք։ Ունի 760 էջ զրութիւն և 387 թերթ, որոնց գերջի եօթից՝ բոլորովին պարապ են։

Ջեռագիրը կը սկսի Անգիտաց Անգիտին ծանօթ Յառաջարանութեամբ, և կը պարունակէ Ամիրտոլվաթի Ցիշատակարանները իսկութեամբ, զորս ներկայացուցած եմ Երկրորդ Զեռագրին առթիւ։

Ապա կու գայ ամբողջ աշխատութիւնը, որ կ'աւարտի 759թ էջով, և ուր կը կարցանց դարձեալ Ամիրտոլվաթի Յառաւոր Ցիշատակարանը, որով կը կնքուի Զեռագիրը։

Այս յառաւորէն անմիջապէս վերջը կը կարգանք Ցիշատակութիւնը, թէ ընդօրինակութիւնն եղած է 1662ին, զի կը գրէ։

«Գրեթե ԹՎԱԿԱՆ ՈՒԾՔԻ (1111 551 = 1662) ԱՊՐԻԼԻ Դ, ՕՐԻ ՈՒՐԱՓԱ»։

Բայց ընդօրինակիչին անունը չի կայ,

ոչ ալ ուր տեղ ընդօրինակուած ըլլաւը
յայսոնի է:

Այսու հանդերձ՝ ես հիանալով կը հիա-
նամ այս ծեռազրին վրայ, և կը խոկամ
ըսկելով, թէ ի՞նչ երկրպած յարգանց ունին
եղեր մեր նախնիք դէպ ի Ամիրտուլվաթ
Այմասիացին, ի՞նչ պաշտում անոր աշխա-
տութիւններու մասին, որ այսպէս անոնց
բազմակերպ ընդօրինակութիւններն ըրած
են զանազան թուականներու, այլեւայլ
բաղացներու մէջ. 15րդ Դարու զաւակ
Այմասիացի այս թժիկը որչափ ժողովր-
դականութիւն և բարի համրաւ վայելած
էր ուրիմ:

Արդէն տեսած և ուսումնասիրած օրի-
նակներու վրայ Ս. Ղազարու Մատենա-
դարանին ունեցաներն ալ բարգելով՝ կը
տեսնեմ որ Ամիրտուլվաթի թէ՛ Օգոստ
թժկուրեան, և Ազգիտաց Անվիտին ու թէ՛
Այիրապատիին օրինակները կը հասնին
բաւական պատկառելի թիւի մը. Ե՞րբ ար-
դեօք կարելի պիտի ըլլայ ասոնց բոլորին
բազդառութիւնն ընել կատարեալ և ան-
սիսալ ընդօրինակութիւն մէշտեղ հանելու
համար. ո՞ր համրերատար ձեռքը պիտի
յօժարի այդպիսի մեծ և հոյակապ աշխա-
տութեան մը հեղինակը հանդիսանալ և
Հայ թժշկական պատմութեան մէջ անմահ
անուն ժառանգել:

Տօք. Վ.Ա.ՐԱՄ Յ. ԹՈՒՐՈՄԵԱՆ

Վեճետիկ — Ս. Ղազար

24 Դեկտեմբեր 1922

(Ժարութակելի)

1704ին շինուեցաւ շոգիի առաջին մեքենան.
Ֆիւլուն 1803ին յարմարցուց իր նաւակին.
1827ին Սոէֆէնսըն գտաւ տեղաշարժը (locomotive):

○

Պրառնինկ' իր անուամբ կոչուող առընանա-
կին հեղինակը՝ շինած է թնդանօթ մը՝ որ կրնայ
մէկ վայրկենի մէջ նետել 120 հարուած:

ՀՆԱԽՈՇՈՎՈԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Յ Ք Ո Վ Ա.

(Ժար. տես Բազմավէպ 1923 էջ 262)

ՄԱՐՄԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒ ՄՏԱԼՈՐ գաստիարա-
կութեան զուգընթաց և անոնց հաւասար,
և մանաւանդ յաճախ աւելի խնամք վա-
յելիք է պատանույն կողմանէ՝ «մարմոյ
կրթութիւնը՝»: Ասոր մէջ կը մտնէր շար-
ժումն ու զուարձութիւն, որ աւելի հրա-
պորիչ կ'ընծայէին զայն մատաղ հասա-
կին, քան նստողական դրութեամբ ստա-
նալի մատուր կրթութիւնը: Առաւելապէս
մեր ազատաց զրօսասիրութիւնն ընդար-
ձակած էր խաղերու կարեռութիւնը թէ՛
իրենց և թէ զաւակաց համար: Եթէ Հա-
յաստանի պեղութերն ունենային և կա-
րենային տալ մեզ նկարչութեան ու քան-
դակագործութեան զանձերէն՝ զորս շռայ-
լօրէն կ'ընծայէն հելլէն և հոռվմէական
արտեստները, անոնց վրայ պիտի տես-
նէինք՝ մեր զուով՝ հին Հայոց զրօսական
ու մարզական խաղերը, որոց մասին մեր
մատենագրութիւնն ալ շատ ժլաւ է դրժ-
րախտարար: Հազիւ անոնց անունները
կու տայ մեզ չափով մը. իսկ նկարա-
գրութիւն՝ գրեթէ ոչ, և զոր մեր իսկ
ստիպուած ենց ստեղծել:

Եւ արդարեկ մեր հարց ևս ունեցած են
և իրենց որդուոց կրթութեան մասն ըրած՝
պէսպէս խաղերը, զորս հետազօտութեան
ներած չափով պիտի տեսնենք հոս յա-
ջորդարար, և զորս խաղացողաց հասակի
և ախորժակի զանազանութեան համեմատ՝
պիտի բաժնեմ երեց զասակարգի, յատուկ
տպայոց, մանկաց և պատսենեկաց կամ զա-

1. Ս. Տիւմ. Դ., 8.